

ԱՐՕՏ

ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 11·

ԱՄՍԱԳԻՐ

ՆՈՅԵՄԲԵՐ 30
1876·

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԲԱՐՈՅԱՊԱՏԵՍ

Նաեւ արքք օրհասականք ընդ վախճանել ընչին հզօրագոյնք կուռին յորոց եւ իմաստունքն տեղի տուեալ փախչին 'ի նոցանէ։

Մեր աղուաբան Ս. Եղիշէ պատմագիրն, որ իւր ամբողջ երկասիրութիւնը զգայուն սրտիւ եւ իմաստուն լեզուաւ գրած է, շատ գեղեցիկ այլաբանութեամբ կը նկարագրէ անիրաւ եւ չարաբարոյ մարդկանց բուռն կատաղութիւնը եւ ծայրահեղ զայրութը այն միջոցին, երբ կը տեսնեն իրենց չարութեանց, անիրաւութեանց եւ բռնական գործոց իրենց վախճանին հասնիլը։

Իմաստուն եւ սուրբ վարդապետի յայտնած սոյն փորձառական նկարագիրը մի այնպիսի ապացուցեալ եւ ակներեւ ճշմարտութիւն է, որոյ ստուգութիւնը եւ գործնական օրինակները ամեն օր կը տեսնենք մեր շուրջը եթէ հետաքննին լինիմք աշխարհի ընդարձակութեան մէջ տեղի ունեցած ամենօրեայ իրողութեանց եւ մարդկային ապրի գործառնութեանցն ու արարմանցը։

digitised by A.R.A.R.@

Արդէն յայտնի եւ ապացուցեալ ճշմարտութիւն է որ մոլութեանց ամեն տեսակներն եւս այնպիսի անդիմադրելի հրապոյր և այնպիսի մեծ զօրութիւն ունին, որոց որ և է տեսակն եւս լինի երբ միանգամ որ և է մէկուն վրայ տիրապետելու լինին. այնուհետեւ շատ մեծ դժուարութեամբ կը թողուն իրենց ճիրաններէն իրենց միամիտ զոհերն. շատ և շատ բաղդաւոր է այն մարդն, որ շատ կամ քիչ վնասով կը յաջողի ճողոպրիլ անոնց մահացու ճիրաններէն. իսկ այն որ յիմարաբար նոցա մատակարարած առ ժամանակեայ քաղցրութենէն հրապուրեալ բոլորովին անձնատուր կը լինի և կամաւոր գերի կը դառնայ անոնց, ալ այնուհետեւ անկարելի բան է բաժանել զնա կամ զրկել իւր ամենասիրելի կենակցէն. և վայ անոնց որք յանդգնին որ և է պարագայի մէջ պարսաւադիր հանդիսանալ այն պաշտելի չաստուածոց և կամուղղութեան հրաւէր կարդալ այն ողորմելի և մոլորամիտ թշուառներն. քանզի այն ատեն անկից աւելի թշնամի կամ հակառակորդ մը չը կրնար նկատուիլ այն արդահատութեան արժանի չարատանջի աչքին. և եթէ համարձակիս մի քիչ եւս յառաջ երթալով բռնի անջատել զնա իւր սիրելի մոլութենէն, ահա այն ատեն անվրէպ կը գտնուիս այն սոսկալի վտանգին մէջ. ինչպէս մարդ մը որ կատաղի արջու մը հետ մարտնչելով կը վիրաւորէ կարելիքը. իսկ արջն օրհասական և եւս կատաղելով իւր ցաւոց խայթերէն յուսահատական ճիգով մը կարծես կրկնապատկելով իւր զօրութիւը աւելի կատաղութիւ կը սկսի մարտնչել իւր վերջին շունչը դեռ չը փչած. ճիշդ այսպէս է նաեւ այն ողորմելին և գրեթէ անբանացեալ մարդն, որ երկար ժամանակ մոլութեան մը կամ ապօրինաւորութեան մէջ մնալով իրեն ունակութիւն և կամ լաւ եւս է ասել երկրորդ բնութիւն կ'ընէ զայն, այլ այնուհետեւ նորա ուղղութիւնը անհնար կը լինի ոչ խօսք կը լսէ և ոչ հարուած կ'զգայ. իրեն համար ամեն խրատ թշնամանք կը թուին և ամեն յորդորական խօսք՝ ծանր նախատինք. քանզի նա աւելի լաւ ընտրած է իւր սիրած մոլութեամբ գերեզման իջնել, քան թէ իւր արած ուղղութեամբ օրինաւոր և պատուաւոր կեանք վարել. այս պատճառաւ որ և է մէկին եթէ համարձակի դիտողութիւն ընել նորա գործոց կամ ընթացից վրայ. անոր սրտին կը դպչի. հետեւաբար և անվրէպ ենթակայ կը լինի անոր կատաղութեան.

Այս ճշմարտութիւնը աւելի լաւ բացատրելու և դիւրահասկանալի ընելու համար, հարկ կը համարիմք մի ամենապարզ և ամեն մարդու իմանալի օրինակով բացատրել.

Ընտանեկան կեանք մի շրջանակ է աշխարհի վրայ. ծնող ապրող և մեռնող ամեն մարդ անպատճառ անտի իւր սկիզբը պիտի առնու. անդ ինքզինքը պիտի ճանաչէ. անդ քիչ կամ շատ պիտի հրահանգուի և վերջապէս անտի պիտի մտնէ աշխարհի ընկերականութեան մէջ. այս պատճառաւ ամեն ոք գիտէ ընտանեկան կենաց որպիսութիւնը, կառավարութեան եղանակը, երջանիկ կամ ապերջանիկ լինելու պատճառներն. երեւակայենք մի բաւական մեծկակ ընտանիք, որք կը բաղկանան նոյն ընտանեաց սկզբնապատճառներէն, նոցա զաւակներէն թոռներէն և պարագայներէն. նոյն ընտանեաց երիտասարդներն եթէ իմաստուն, խոհեմ, անտեսապէտ, արդարասէր և օրինապահ լինին, կը տեսնես որ նոյն տան մէջ հնազանդութիւն, հա-

digitised by A.R.A.R.@

աստարմութիւն, սէր եւ միութիւն թագաւորելով՝ ամէն ոք ժրութեամբ իւր պաշտօնը կը կատարէ. ամէն գործ օրինաւորութեամբ և կանոնաւորութեամբ կը կատարուին. տունն երջանիկ կը մեծանայ, կը հարստանայ և կը շէնանայ. ուր իւրաքանչիւր ոք իւր պարտքը երբ կատարէ ապահովութիւն ունի երջանիկ և հանգիստ ապրելու, ուստի և ամէն մարդ ամենայն հաւատարմութեամբ կ'աշխատի պարտակատար հանդիսանալ և իրեն ինկած ծառայութիւնը կատարելով նոյն տունը միշտ շէն և պայծառ պահել. այս մի այնպիսի իրողութիւն է զոր ամէն ոք գիտէ, մանաւանդ անոնք, որ կարգապահ ընտանեաց և օրինաւոր գերդաստանի մէջ ապրելու բարեբաղդութիւնը ունին կամ ունեցած են։

Իսկ ասոր ընդհակառակն եթէ նոյն ընտանեաց երիտասարդներն հանձարէ, խնամատարութենէ և արդարութեան ըղգացումներէ զուրկ գտնուելով այլ և մոլութեանց տէր լինին, որով փոխանակ արդար ոնտեսութեամբ և իմաստուն կառավարութեամբ իրենց տան հոգը հոգալու, իրենց հաճոյից և մոլութեանց ետեւէն լինին և իրենց ընտանեաց անդամոց մէջ խորութիւն եւ անհաւասարութիւն դնելով մին զրկեն և միւսը պարարտացնեն, միոյն արդար աշխատութեան արդիւնքը իրմէն յափշտակելով՝ անիրաւ անաշխատին վայելիցը զոհեն, կամ իրենց լռութեամբ կամ անհոգութեամբ թոյլ տան իրենց սիրելի հզօրագոյնին, որ կռփէ և հարստահարէ իւր տկար եղբայրը և զնա իբրեւ ստրուկ գործածէ, այն ատեն նոյն տան մէջ խաղաղութիւնը եւ անհամաձայնութիւնը յառաջ գալով՝ հետզհետէ պիտի կոզպտուի իւր բարեբաղդութենէն, պիտի անշքանայ և դէպ 'ի կործանումն պիտի դիմէ և այսպիսի տան նախանձոտ դրացիք եւս սոյն տկարութենէն օգուտ քաղելով պիտի աշխատին տիրապետել նորա աւերակաց վրայ և իրենց սեփականել. նոյն տան անմիտ և ողորմելի տերը բռնաբար դուրս արտաքսելով իբրեւ անշքոր և ապիկար նոյն կոչման։

Արդ այսպիսի բարեբաղդ և շքեղ տուն մը երբ իւր երիտասարդների անիմաստ կառավարութեամբ այն աստիճանի անշքեղութեան եւ աւերման մէջ կը գլորի, բնականաբար զգայուն սիրտ ունեցող օտարին անգամ արգահատութեան արժանի կը լինի. ապա քանի՞ առաւել նոյն ընտանեաց անդամ և զուտակ գտնուող ուշիմ և գիտող անձին. և որովհետեւ ամէն կարգի և աստիճանի մէջ եւս կը գտնուին միշտ աւելի զիտող, խոհեմ, և հեռատես անձինք, բնական է որ նոյն ընտանեաց անդամոց ստորին համարուած կարգին մէջ եւս այնպիսի անձինք գտնուին, որք նոյն իսկ տան երիտասարդն և առաջին համարուած անդամին եւս աւելի սիրտ և հանձար ունենան. և ահա այնպիսիք սրտացաւ հոգւավ դիտելով իրենց երիտասարդների անիմաստ կառավարութիւնը և անկարգ ընթացքը, որոյ երեսէն ամբողջ տան կրած վնասը և կործանման ենթակայ լինելը կը դարձին և կը մրմնջին յոյժ. բայց որովհետեւ միշտ արհամարհելի և ատելի նկատուած են յաչս իրենց տան նախագահին և ուրիշ միջոց մը չունին իրենց դիտողութիւնը յայտնելու, բայց եթէ խնդրանօք աղաչանօք և պաղատանօք, իրենց կրած զրկանքները, անիրաւութիւնները և թշուառութիւնները նկարագրելով եւ այս սպառնառաւ ամբողջ տան վնասուիլը ցոյց տալով. ասոր համար ի-

digitised by A.R.A.R.@

բենց ձայնը լսել տալու և իրենց տունը կործանումէ ազատ պահելու միշտ անկարող կը գտնուին. քանզի իւր տան գահերէցն իւր բազմադարեան վնասակար սովորութեանց մէջ տոգորուած և հինցած լինելով՝ ամենեւին չը կամիր մազի չափ շեղել անոնցմէ կամ զկուիլ այն ապօրինի բերկրութիւններէն և վայելքներէն ճիշդ նման այն ծայրահեղ գինեմոլին, որ իւր ամենէն ունեցածը և ամենէն աւելի սիրելի առարկայները այն սպառիչ ախտին զոհ տալով՝ Թշուառութեան յետին աստիճանին վրայ իւր կիսատեալ ոտքը դրած կ'աշխատի տակաւին և մեծ ճիգ կը թափէ որպէս զի երկու լումայ ձեռք ձգէ որ և է միջոցաւ և նուիրէ բաղոսի չաստուածոյն, փոխարէն երջանկութիւն և բերկրութիւն վայելելու, մի այնպիսի երջանկութիւն որոյ ետեւէն եկած դառնութիւնը առաւել չար եւ դառն է քան զառաջին քաղցրութիւնն ու բերկրութիւնը, զոր դեռ եւս չըզգար այն յիմարացեալ և ողորմելի մարդն։

Եթէ ունիս քաջութիւն, համարձակէ ըսել այսպիսի մարդու մը թէ գինեմոլութիւնը վնասակար ախտ է. ահա զքեզ կործանեց. ընտանիքդ և զաւակներդ Թշուառացուց. տունդ քանդեց և քու կեանքդ ալ վերջացընելու վրայ է. այս խօսքերը լսելուն պէս՝ իւր ոգելից ըմպելիներէն այլանդակած առկայծեալ աչքերը խոժոռ և զարհուրելի վրադ սեւեռելով՝ ըսպառնալից կատաղութեամբ կը պոռայ երեսիդ, թէ դու պատժապարտ ես և մահու արժանի. որովհետեւ կը յանդգնիս իմ պաշտելի կուռքս նախատել եւ գործոյս միջամտել եւ թէ դու ո՞վ ես որ կը համարձակիս իմ ընթացից վրայ դիտողութիւն ընելու։ Դու եթէ գործ չունիս աշխատէ հասկցնել անոր թէ՝ իւր մոլութեան վընասակար հետեւանքը ոչ միայն իր՝ այլ և շուրջը գտնուող անձանց վրայ եւս կը ծանրանայ և կը թշուառացնէ. դու աշխատէ պատմական իրողութիւններով և անժխտելի փաստերով հասկցնել անոր՝ թէ այն մոլութիւնը որչափ մարդիկներ կործանած, որչափ տներ քանդած և քանի ընտանիքներ, ընկերութիւններ և ազգեր իսպառաստուռ ջնջած է, և թէ դու եւս անոր հետ հաւասար պարտք ունենալով տան պահպանութիւն և զարգացման, յառաջադիմութեան և երջանկութիւնը, հետեւաբար և հաւասար իրաւունք ունիս անոր վտանգ սպառնացող որ և է վտանգի դէմ մնքառելու և իւրաքանչիւր անդամոց վնասակար ընթացից վրայ դիտողութիւն ընելու. սակայն 'ի զո՞ւր. նա խօսք հասկանալ չուզեր. նա պարտք ճանաչել չը կամիր. նա իրաւունք յարգել չը գիտեր. նորա կամքն է իւր սովորութեանց հետեւիլ թէեւ վնասակար լինին. նորա հաճոյքն է իւր որդւոց թշուառութեամբ պարարիլ. և նորա անբռնաբարելի իրաւունքն է բռնական միջոցաւ իւր ուզածն ընել, և քու պարտքդ է ըստ ամենայնի և անսահման հնազանդիլ. քանզի նա հայր է, դու որդի. նա իշխող է. դու հպատակ. նա տէր է, դու ստրուկ. ուստի դու պարտաւոր ես ամեն բանէ և ամեն իրաւունքէ հրաժարելու. քանի որ նա կայ եւ զքեզ կառավարելու սահմանուած է. արդէն դու 'ի ճակատագրէն ենթակեալ ես անոր լծոյն այն օրէն, երբ նորա զաւակը լինելու դատապարտուած ես, ուստի քանի որ նա կենդանի է և դու անոր հովանաւորութեան տակ կ'ապրիս, աշխարհի վրայ սեփական բան մը չունիս. քու ինչքդ, քու ստացուածքդ, քու պատիւդ, քու ընտանիքդ և

digitised by A.R.A.R.@

զաւակներդ և նոյն իսկ քու կեանքդ նորա հաճոյից առարկայներն են. եւ նոյն իսկ քու կենդանութեան մէջ մը նպդ անդամ արդէն մի մեծ շնորհ է քեզ համար. ուստի դու պարտաւոր ես միշտ քու գլուխդ հարուածող ձեռքը համբուրելու. քու արիւնդ ծծող տղուկը փայփայելու և զքեզ գիշատող գազանաց դէմ շնորհակալութիւն հրատարակելու. քանզի այն է քու հօրդ կամքը. անոնք նորա կամակատարներն են, քեզմով պիտի կըշտանան որ իրեն ծառայեն. եւ եթէ անոնց ծուռ նայիս կամ տրտունջի փոքրիկ ձիգ մը արձակես, գործդ լմնցած է, ըստ որում անհնազանդութիւն կ'ըլլայ ըրածդ. հետեւաբար և արժանի կը լինիս բանտի, գանի, սքոորի, ամեն տեսակ զրկանաց և անպատուութեան։

Ա. յսպէս ահա մոլութեանց, ապօրինաւորութեանց և անկարգութեանց գերի եղող մարդն արդարութիւն, օրէնք և իրաւունք առ ոսն հարկանելով կը յամառի ըստ ամենայնի հաւատարիմ մնալ իւր սիրելի չաստուածոց, և երբ իւր չարեաց չափը լեցուելով արդարութեան հզօր ձեռաց իւր վրայ պնդապէս ծանրանալը եւ զինքը ճնշելը զգայ, և իմանալով որ իւր սնիրաւութեանց վախճանն եկեալ հասեալ է այնուհետեւ, ահա այն ատեն յուսահատ կատաղութեամբ ճիշդ օր հասական արջու պէս հզօրագոյն կը սկսի կռուիլ եւ իւր առջեւ եղած ամենայն ինչ խորտակել, որպէս զի այնուհետեւ վրէժ մը լուծած լինի. սակայն որովհետեւ ընդհանուր օրէնք է որ միշտ ուղղութիւնն ու արդարութիւնն յաղթող պիտի հանդիսանան թիւրութեան և անիրաւութեան վրայ, հետեւաբար իմաստուն եղողն պէտք է իմաստութեամբ տեղի տայ այն բորբոքեալ կատաղութեան առջեւ, անշուշտ լինելով որ նորա բորբոքումն իւր մօտալուտ անկման նշանն է. Ասուած որ տէր է որբոց և պաշտպան զրկելոց, պիտի հասցնէ իւր արդար վրէժխնդրութիւնը և գայթի անօրէնն և պիտի իյնայ գլխիկոր, որոյ անկումը շատ մեծ պիտի լինի։

Գ. Ս. Շահանիան։

ՄԻ ՀԱՄԱՌՕՏ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ (1)

Մեր ներկայ դիտողութեան առիթ տուաւ Մեղու Հայաստանի պատուական լրագրին 39 համար թերթին մէջ հրատարակուած մի նամակ, գրուած Վաղարշապատէն, որոյ մէջ

---

(1) Այն դիտողութիւնը Միաբանութենէն մի քանի պատուաւորժան հայրեր և եղբայրներ տուած են Սիոնի մէջ հրատարակելու համար։ Իրրեւ միաբանական եղբայրութեան անդամ մեք եւս ըստ ամենայնի համամիտ եմք Ազգ. հոգեւոր իշխանութեան մասին յայտնած գաղափարներուն, և կարող եմք ըսել, որ համոյն Միաբանական լրութիւնն եւս համամիտ է. վասն զի Ս. Աթոռէս մեկնողներուն առթիւ, որք Ազգին մէջ առանց հարցուելու կ'ընդունուին մեծ պատուով եւ ոմանք իսկ Եպիսկոպոսութեան արժանի դատուած են, հարցումներ եղած են միաբանական Ընդհ. ժողովոյ մէջ և Ամեն. Ս. Նախագահը յուսադրական պատասխաններով գոհացուցեր է. ըսած է թէ, «Պէտք եղած տեղը գրուած է, հարկաւ տնօրէնութիւն մի կ'ըլլայ». բայց մինչեւ ցարդ սորա գործնական արդիւնքն չը տեսանք։ Եթէ այս տարտամ ընթացքը շարունակուի, ցաւալի հետեւանքներ կարող է ունենալ թէ Ս. Աթոռոյս եւ թէ ընդհանուր Ազգին համար. վասն զի մեացողներն տեսնելով, որ դուրսի կեանքը աւելի դիւրին է, բնականաբար իրենք եւս պիտի հրաժարին։ որոյ հետեւութիւնը ամեն խորհող ոք կարող է ինքնին իմաստասիրել։ Ս. Ի.